# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«21» հուլիսի 2020 թվականի N 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 164-րդ և 167-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի N1384-Ն որոշմամբ՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավար Էդգար Հովհաննիսյանին հատկացնել իրեն հասանելիք 2019 թվականի ամենամյա չօգտագործված արձակուրդը՝ հուլիսի 24-ից 12 աշխատանքային օր տևողությամբ և 2020 թվականի ամենամյա հերթական արձակուրդը՝ 20 աշխատանքային և 4 լրացուցիչ օր տևողությամբ:
2. Պարտականությունները դնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Հովհաննես Թովմասյան վրա:
3. Էդգար Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի սեպտեմբերի 12-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական, հուլիսի
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» հուլիսի 2020 թվականի N 27

## ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0049-0015 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տալ հետևյալ հասցեավորումը՝ Արցախի փողոց, թիվ 8:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հուլիսի 2
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» հուլիսի 2020 թվականի N 28

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Բաղրամյան փողոցի գիշերային լուսավորության համակարգի վերանորոգման համար ավտոմատ անջատիչ ձեռք բերելու նպատակով տրամադրել 28 000 (քսանութ հազար) դրամ գումար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հուլիսի 2
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» հուլիսի 2020 թվականի N 29

## ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել քաղաքացի Մարալ Անդրանիկի Գաթրճեանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող համայնքի Երիտասարդական փողոցի թիվ 48 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների օրինականացման խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ին N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով «Խաչվահան» ՍՊԸ-ի /լիցենզիա 15543/ կողմից տրամադրված եզրակացությունը՝ որոշում եմ.

1. Օրինական ճանաչել քաղաքացի Մարալ Անդրանիկի Գաթրճեանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Երիտասարդական փողոցի թիվ 48 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված 168.7 քմ մակերեսով բնակելի տունը, 3.9 քմ մակերեսով աստիճանը, 26.1 քմ մակերեսով բաց պատշգամբը և 17.0 քմ մակերեսով պարիսպը:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է 438 690 դրամ /չորս հարյուր երեսունութ հազար վեց հարյուր իննսուն/ դրամ:
3. Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

4. Հողամասին՝ շինությունով, տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Երիտասարդական փողոց, թիվ 48:
5. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական, հուլիսի 6

գ. Մուսալեռ

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

/Հաստատում եմ

Մարալ Գաբրճեան Անդրանիկի (Անուն, ազգանուն) ին Հողհատկացման հիմքը

համայնքի ղեկավար

Արմավիր (Մարզ)

Մուսալեռ (Համայնք)

(Հասցե)

Կ.տ. «06» 07 2020թ.

Մասշտաբ 1:500




| ՀՈՂԱՄԱՍԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ | |
|---|---|
| ...րեսը (հա) | 0.096 |
| ...ագիրը | 0029-0002 |
| ...ակային նշանակությունը | Բնակավայրերի |
| ...ռական նշանակությունը | Բնակելի կառուցապատման համար |
| ...ասը ծանրաբեռնված է | շենք - շինություններով |

| Շրջադարձային կետերի համարը | ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ Y | X | Գծային չափերը | սահմանակից սեփականատերեր կամ հողօգտագործողներ |
|---|---|---|---|---|
| | | | | |

ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ

| Համարը՝ ըստ հողամասի հատակագծի | Գործառական նշանակությունը (անվանումը) |
|---|---|
| 1 | Բնակելի տուն հիքնակամ |
| 2 | Պարիսպ հիքնակամ |

...ող (ստորագրություն) Մանուկյան Աստղիկ Գուրգենի (Անուն, ազգանուն)

...վորման վկայականի համարը «096» տրման ամիս, ամսաթիվը «27.02.2012»

...ռանական անձ 01Ա221947 (պետական գրանցման համարը) ԱՁ «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՍՏՂԻԿ» (Անվանումը) (Ստորագրություն)

Կատարման ամսաթիվ 04.06.2020 թ.

## ՀՈՂԱՄԱՍԻ

| տի հ/հ | Y | X | Հեռ (մ) |
|---|---|---|---|
| 1 | 4447423.01 | 8446967.03 | 16.06 |
| 2 | 4447436.92 | 8446958.99 | 60.15 |
| 3 | 4447468.62 | 8447010.11 | 15.80 |
| 4 | 4447455.09 | 8447018.27 | 60.46 |
| 1 | 4447423.01 | 8446967.03 | |

## 1

| Կետի հ/հ | Y | X | Հեռ (մ) |
|---|---|---|---|
| 1 | 4447428.21 | 8446967.75 | 1.87 |
| 2 | 4447429.82 | 8446966.80 | 1.31 |
| 3 | 4447429.12 | 8446965.69 | 9.07 |
| 4 | 4447436.97 | 8446961.16 | 10.10 |
| 5 | 4447442.37 | 8446969.69 | 9.07 |
| 6 | 4447434.51 | 8446974.23 | 3.54 |
| 7 | 4447432.62 | 8446971.24 | 1.88 |
| 8 | 4447431.01 | 8446972.20 | 5.25 |
| 1 | 4447428.21 | 8446967.75 | |

Սարալ Գաբրճեան Անդրանիկի

Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Արմավիր համայնք Մուսալեռ Հասցե փ.

Մասշտաբ 1:200




① Բնակելի տուն
1 հարկ
H=3.0
h=2.35-2.8
D=0.45-0.49
d=0.18-0.25




① Բնակելի տուն
2 հարկ
H=3.2
h=3.0
D=0.2-0.45
d=0.1

04.06.2020

Կատարող ____________ (ստորագրություն) Մանուկյան Աստղիկ Գուրգենի (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը «096» տրման ամիս, ամսաթիվը «27.02.2012»

Իրավաբանական անձ 01Ա221947 (պետական գրանցման համարը) ԱՁ «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՍՏՂԻԿ» (Անվանումը) ____________ (Ստորագրություն) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ REPUBLIC OF ARMENIA MARZ ARMAVIR PRIVATE ENTREPRENEUR 01Ա221947 ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՍՏՂԻԿ ASTGHIK MANUKYAN 52186163

# Շինությունների բնութագիրը

| ՀՀ | Նպատակային նշանակությունը | Գործառական նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերեսները (քմ) Օրինական | Մակերեսները (քմ) Ինքնակամ | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը թիթեղ | Տանիքի նյութը շիֆեր | Տանիքի նյութը կղմինդր | Տանիքի նյութը այլ նյութ | Ավարտվածության աստիճանը անավարտ | Ավարտվածության աստիճանը մինչև 50% | Ավարտվածության աստիճանը 50-80% | Ավարտվածության աստիճանը 80% և ավել | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը փայտ | Միջհարկային ծածկի նյութը երկաթբետոն | Արտաքին հարդարումն ըստ կողմերի Հրապատ | Արտաքին հարդարումն ըստ կողմերի ծածկապատված | Արտաքին հարդարումն ըստ կողմերի ծեփված | Արտաքին հարդարումն ըստ կողմերի ապակեպատ | Արտաքին հարդարումն ըստ կողմերի պատշգամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | բնակելի | բնակելի տուն | 1 | 2 | | 71,60 | 2,80 | 200,5 | 2020 | | | | | | | | v | տուֆ | | v | | | 4 | | |
| | բնակելի | բնակելի տուն | 1 | 2 | | 3,10 | 2,35 | 7,3 | 2020 | | | | | | | | v | տուֆ | | v | | | 1 | | 3 |
| | բնակելի | բնակելի տուն | 2 | 2 | | 57,90 | 3,00 | 173,7 | 2020 | v | | | | | | | v | տուֆ | | v | | | | | 4 |
| | բնակելի | Բ/Դ | | | | 22,30 | | | 2020 | | | | | | | | | | | | | | | | |
| | բնակելի | Աստիճան | | | | 3,90 | | | 2020 | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | բնակելի | պարիսպ | | | | 12,10 | 1,90 | 23,0 | 2020 | | | | | | | | v | տուֆ | | | | | | | |
| | բնակելի | պարիսպ | | | | 4,90 | 2,20 | 10,8 | 2020 | | | | | | | | v | տուֆ | | | | | | | |

| Շինության ընդհանուր մակերեսը | Այդ թվում Օրինական կառուցված (քմ) | Այդ թվում Ինքնակամ կառուցված (քմ) |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 175,8 | | 175,8 |

Կատարող __________ Մանուկյան Աստղիկ Գուրգենի 04.06.2020
(ստորագրություն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական «096» տրման ամիս, ամսաթիվը «27.02.2012»թ.

Իրավաբանական անձ 01Ա221947 ԱՁ «ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՍՏՂԻԿ» __________
(ստորագրություն)

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ARMAVIR MARZ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ PRIVATE ENTREPRENEUR REPUBLIC OF ARMENIA ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 01Ա 221947 ԱՍՏՂԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ ASTGHIK MANUKYAN 52186163

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» հուլիսի 2020 թվականի N 30

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 867–Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 12.06.2020թ. թիվ 45 որոշման 3-րդ կետը՝ որոշում եմ.

1. Աջակցություն ցուցաբերել Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի COVID-19-ով պայմանավորված բժշկի ցուցումով ինքնամեկուսացված սոցիալապես խոցելի խմբերին՝ հատկացնելով սննդամթերք ու սանիտարահիգիենիկ պարագաներ՝ համաձայն մեկ անձին հասանելիք սննդամթերքի և սանիտարահիգիենիկ պարագաների հաշվարկի և համայնքում առկա բժշկի ցուցումով ինքնամեկուսացվածների տվյալների:
2. Սույն որոշման առաջին կետում նշված օժանդակությունն ապահովելու նպատակով սննդամթերք ու սանիտարահիգիենիկ պարագաներ ձեռք բերելու նպատակով տրամադրել 50500 (հիսուն հազար հինգ հարյուր դրամ) գումար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հուլիսի 7
գ. Մուսալեռ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
# ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» հուլիսի 2020 թվականի N 31

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 111-Ն որոշումը ՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի տրակտորի շահագործումն ապահովելու համար նյութեր և պարագաներ ձեռք բերելու նպատակով տրամադրել 42000 (քառասուներկու հազար) դրամ գումար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հուլիսի 10
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» հուլիսի 2020 թվականի N 32

### ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 867–Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 12.06.2020թ. թիվ 45 որոշման 3-րդ կետը՝ որոշում եմ.

4. Աջակցություն ցուցաբերել Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի COVID-19-ով պայմանավորված բժշկի ցուցումով ինքնամեկուսացված սոցիալապես խոցելի խմբերին՝ հատկացնելով սննդամթերք ու սանիտարահիգիենիկ պարագաներ՝ համաձայն մեկ անձին հասանելիք սննդամթերքի և սանիտարահիգիենիկ պարագաների հաշվարկի և համայնքում առկա բժշկի ցուցումով ինքնամեկուսացվածների տվյալների:
5. Սույն որոշման առաջին կետում նշված օժանդակությունն ապահովելու նպատակով սննդամթերք ու սանիտարահիգիենիկ պարագաներ ձեռք բերելու նպատակով տրամադրել 40000 (քառասուն հազար դրամ) գումար:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական, հուլիսի 20
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հուլիսի 2020 թվականի N 33

## ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 28.02.2020թ. թիվ 20 որոշումը՝ որոշում եմ.

1. «Մուսալեռ համայնքի Գ. Լուսավորիչ, Նարեկացի և Մուշ փողոցների գազաֆիկացում» սուբվենցիայի ծրագրի շրջանակներում գազաֆիկացման աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնելու համար տրամադրել 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Հ.ԹՈՎՄԱՍՅԱՆ

2020 թվական, հուլիսի 28
գ. Մուսալեռ